



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 4 հոկտեմբերի 2012թ.

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ
ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ» ԽՈՐԱԳՐՈՎ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
6-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Ձերմոռեն ողջունում եմ «Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ» լրագրողների համահայկական 6-րդ համաժողովի մասնակիցներին և հյուրերին:

Համաժողովի խորագրի ընտրությունը գնահատում եմ խիստ արդիական: Դուք խորհրդածելու եք համազգային մի հիմնախնդրի շուրջ, որը մեր հավաքական օրակարգում կարևորագույն տեղ է զբաղեցնում:

Մեծ տարելիցները մղում են վերարժևորման, վերախմաստավորման: Անցել է զրեթե մեկ դար. հասակ են առնում աշխարհասփյուռ հայության չորրորդ-հինգերորդ սերունդները, որոնց ներկայացուցիչները նաև դուք եք:

Թվում է՝ գնալով ժամանակը պիտի ամոքի ցավը, մեղմի ցասումը: Դա, թերևս, Օսմանյան կայսրության և նրա այլատյաց հետևորդների սխալ կանխատեսումն է: Պատմությունը հակառակն է ապացուցում, հակառակն են ապացուցում Սարդարապատն ու Արցախյան գոյամարտը, Հայոց անկախ պետությունը, աշխարհասփյուռ հայ եկեղեցիներն ու դպրոցները, Ծիծեռնակաբերդն ու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված բազմաթիվ կոթողները, նրանց շուրջը բռունցքված տասը միլիոն հայությունը:

Մենք չենք կարող լռել, մանավանդ որ ցեղասպանությունը շարունակվում է նաև այսօր: Սահմանների փակ լինելը, պատերազմի սպառնալիքը և ռազմատենչ հայտարարությունները, քնած սպային կացնահարելը ևս ցեղասպանության հետևանքներ են: Սա նշանակում է, որ Հայոց ցեղասպանության միջազգային